Հ. Տ. ՍԱՀԱՅԵԱՆ Փաստաբան

ՑՈՎՀ. ԴԱՊԱՐԵԱՆ

Թոդազիօ 13 մարտ 905

...եան եղբարք այս տարուան Ցունվարէն սկսեալ երկու սաներ սկսած են պահել Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց բարձրագոյն վարժարանին մէջ, իրենց բարեյիշատակ հօր Կարապետ Թօփալեանի անուամբ։

# ՀԱՅ-ՀՌՈՄԷԱԿԱՆՆԵՐԷՆ

## ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ՏԱՎՈՒՏ ՓԱՇԱՅԻ ԿՏԱԿԸ

## ԵՐԵՍՈՒՆ ՀԱԶԱՐ ԱՆԳԼ. ՈՍԿԻ

Ճէպէլի Լիպանի նախկին կառավարիչ հանգուցեալ Տավուտ փաշա որ զաւակ չէր ունեցած՝ Ս. Ցովհան Ոսկեբերան եկեղեցւոյ մեծաւոր Տ. Նիկողոս Ծ. Վ. Գազչեանէ հոգեզաւակ...

...ճանին սպասել պէտք պիտի ըլլայ, այս մեծ եկամուտը ձեռք անցընելու համար։

Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

* * *

Հայ Հռովմէականներու Պատրիարքարանին վարչական ժողովը իր անցեալ ուրբաթ օրուան նիստին հրաւիրեց Ս. Ցակոբայ Հիւանդանոցի հոգաբարձութիւնը և յայտարարեց թէ բարեսէր անձնաւորութիւն մը որ անունը յայտնել չուզեր՝ եօթը հազար ոսկի կուտայ Հիւանդանոցին՝ նոյն հաստատութեան կալուածներուն կից գտնուած գետնին վրայ նոր արտաթըման մը և տակը խանութներ կառուցանելու համար։ Ցարգելի տեղեկատուն որ այս լուրը կը հաղորդէ մեզ, չըսեր թէ այս գումարը իբր փո՞խ տրուած է թէ նուիրուած է Հիւանդանոցին։

## ՄԱՆԶՈՒՄԷԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԵԱՆՑ ԲԱԺԻՆԸ

Ազգ. Գերեզմանատունը։

Իւսկիւտար, 18/26 Մարտ 1905

Կը խնդրուի ծաղկեպսակ չղրկել։

ԾԱՆՕԹ.—Կամուրջէն շոգենաւը կը մեկնի ժամը 3.50ին։

Մահազդ չընդունողներէն կը խնդրուի ներկայս իբր այն նկատել։

## ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Այսօրուան Մանզումէի մէջ ապշութեամբ կարդացի «Կրկնամկրտութիւն» խորագիրին տակ «Նիկօմիդիացի»ին կողմէ ինծի վերագրուած կրկնամկրտութեան արարքի մը առասպելական պատմութիւնը։ Կը փութամ ծանուցանել թէ, ես ո՛չ Հայ Լուս. աղջիկ մը երբեք մկրտած եմ պսակելէ առաջ և ո՛չ ալ մտքէս անցուցած եմ այդպիսի կրկնամկրտութիւն կատարել, վասն զի ես ալ, Աւետարերի խմբագրութեան նման, Հայ Եկեղեցւոյ մկրտութիւնը ամէն պարագայի մէջ վաւերական կը նկատեմ։ Ուստի հաճեցէք հրատարակել այս հերքումնագիրը ի սէր...

«Նիկօմիդիացի»ին կը մնայ ուրեմն կա՛մ ընդունիլ այս հերքումը և կամ հաստատել իր Մարտ 5 թուակիր նամակը, որով կ'ըսէր թէ Վեր. Ցովսէփ Ճէճիզեան՝ հարսնցա։ Հայ աղջիկը կրկին մկրտած է հակառակ օրինաց։

## ՓԱՐԻԶԻ ՊՈՐՍԱՆ
### BOURSE DE PARIS

27 Մարտ 1905

| | | |
|---|---|---|
| Ֆրանս. 3% Français) | 99 | 75 |
| Ռէժի (Tab. Turcs) | 367 | — |
| Օսմ. Միացեալ (R. Nv. Unif.) | 91 | 85 |
| Երկաթուղի (Lots Turcs) | 134 | 25 |
| Պանք. ՕԹՄ. (Banque Ott.) | 604 | — |
| Թրանսվաալ (Transvaal) | 97 | — |

# ՌԷՍՄԻ

## ՆՇԱՆ

# ՆԵՐՔԻՆ

# ԲԵՐԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

...

ԾՈՎԻ ԱՐԿԱԾ.— Չորեքշաբթի օր, Բէրամոյէն Պանտրմա գացող մակոյկ մը, ուր 8 Ցոյներ կային, շրջեյալ Թութէսի բացերը։ Մէջիններ և մակուկավարը ամբողջ խեղդուեցան։

## ԲԵՐԱՅԻ ԱՂՔԱՏԱԽՆԱՄԸ

Աղքատախնամս կը փութայ ծանուցանել թէ՝ փետրուար 25էն մինչեւ այսօր հետեւեալ նուիրատուութիւնները եղած են.

Ազն. Օր. Սաթենիկ Զարֆճեան իր եղբօրորդւոյն Տօքթ. Զարֆճեանի բըժշկական քննութիւնները յաջողապէս աւարտած և ողջամբ վերադարձած ըլլալուն առթիւ՝ նուիրեց 200 ղրշ., Հանգուցեալ Պօղոս էֆէնտի Մար...

...լով բազմաթիւ հիւանդաց և կարօտելոց շնորհապարտ զգացմանց հաւաստիքը։

Մնամք յարգանօք

Ի դիմաց Աղքատախնամին Բերայի

Ատենադպիր Ատենապետ

Ռ. ՍԱՄԻԿԵԱՆ Տքթ. Տ. ԱՃԷՄԵԱՆ

# ԳԻՇԵՐՈՒԱՆ ՀԵՌԱԳԻՐ

## ՎԵՐՋԻՆ ԺԱՄ

ԼՈՆՏՈՆ, 27 մարտ.— Անգլիական թերթերուն մեծամասնութիւնը կը կարծէ թէ, ռուսական վերջին նախարարական ժողովը Զարին արօրմանը ենթարկած է Ճարոնի հետ հաշտութեան ծրագիր մը։

ՓԱՐԻԶ.— Բեթերսպուրկէ կը ծանուցանեն թէ Զարը՝ եա առած է զօրավար Կրիբընպէրկի, Մանչուրիոյ ռուսական Բ. բանակին հրամանատարութեան պաշտօնը։ Զօրավարը կը պահէ սակայն իր Զարին թիկնապահութեան պաշտօնը։

ՀՌՈՄ.— Կը ծանուցուի թէ իտալական նաւատորմիղը, իր տարեկան մեծ փորձերէն յետոյ պիտի այցելէ Ֆրանսայի միջերկրականի ջուրերը։

## ՕՐՈՒԱՆ ԳԻՐՔԸ

Կրօնաւէր հաստատութեան կը յանձնարարենք «Գիտակ»ի Մատծութիւն Տօնական Օրերու Հայ Ս. Եկեղեցւոյ շահեկան և օգտակար գրքոյկը, որ արժանի է ընթերցման՝ մանաւանդ ներկայ Մեծ Պահքի օրերուն։ Կը գտնուի բոլոր գրավաճառներուն քով։ Կեդրոնատեղին է Մահմուտ Փաշա, Եէնի Զարշը, Թիւ 206—29, Մարտիկեան Եղբայրներու վաճառատունը։ Գին՝ 5 դահեկան։

# ՍԱԿԱՐԱՆ

## ԴԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱՆ

14/27 Մարտ 1905

ՕՍՄ. ՄԻԱՑԵԱԼ

| | |
|---|---|
| Երէկ իրիկուան գոցուելու | 96.23 |
| Ամէնէն բարձր գինը | 96.35½ |
| » վար գինը | 96.19½ |

ՌՈՒՄԷԼԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻ

| | |
|---|---|
| Երէկ իրիկուան գոցուելու Ֆր. | 132. |
| Երէկուան բարձր գինը | 132.75 |
| » վար » | 131 87 |

